«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ - 00138021

«Association of accountants of small and middle entrepreneurship of Armenia»
Non Governmental Organization

«Ассоциация бухгалтеров малого и среднего предпринимательства Армении»
Общественная Организация

(011) 60 00 00 www.aasmea.am info@aasmea.am founder@aasmea.am www.facebook.com/aasmea.ngo

ՀՀ, ք.Երևան, Արաբկիր ՎՇ, Վաղարշյան 12, 5-րդ հարկ

Թիվ Վ - 02
26.02.2019թ.

Հայաստանի Հանրապետության վարչապետ
Պարոն Նիկոլ Փաշինյանին
«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա»
ՀԿ-ի նախագահ Վահագն Համբարձումյանից

Հարգարժան վարչապետ.

ՀՀ կառավարությունը դեռևս 2013 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունել էր «Իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմնի սպասարկման գրասենյակների գործառույթները նոտարների, փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և այլ անձանց կողմից իրականացվելու կարգը սահմանելու մասին» N 1110-Ն որոշումը:

Նշված որոշմամբ հաստատված կարգով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակների գործառույթները կարող են իրականացնել նաև նոտարը, նշված կարգով սահմանված որոշակի չափանիշներին համապատասխանող **<u>փաստաբանը, փաստաբանական գրասենյակը</u>**, ինչպես նաև կարգով սահմանված այլ անձինք: Ընդ որում, այդ գործառույթներն իրականացնելու համար, անհրաժեշտ է, որպեսզի նշված անձինք պետական ռեգիստրի գործակալության հետ կնքեն նույն որոշման N 2 հավելվածով նախատեսված պայմանագիր՝ դրանով իսկ միանալով գործակալության տեղեկատվական համակարգին:

Մեր կարծիքով այս որոշման ընդունումը բարեփոխում էր՝ միտված բիզնեսի գրանցման գործընթացի մատչելիության ապահովմանը, քանի որ մեխանիզմի իրագործումը ենթադրում է.

1. Սպասարկման գրասենյակների տարածվածության ընդլայնում և դրանով հանդերձ այս գրասենյակների գործառույթներից օգտվելու մատչելիության բարձրացում
2. Բիզնեսի գրանցման գործընթացի այլընտրանքային ծախսերի կրճատում
3. Բիզնեսի գրանցման համար պահանջվող ժամանակի էական կրճատում

4. Բիզնեսի գրանցման հետ կապված՝ պետական ռեգիստրի գործառնությունների հետ առնչվող այլ գործարքների կատարման դյուրինություն.
5. Պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակների գործառությունների ապահովման համար պետական ծախսերի կրճատում:

Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ չնայած իրավական դաշտի առկայությանը, առ այսօր այս բարեփոխումն իրագործելու նպատակով որոշմամբ սահմանված անձանց շրջանում առանձնապես ակտիվություն չի նկատվում:

Համոզված ենք, որ իրավիճակը տրամագծորեն կփոխվի և այս բարեփոխումը ամբողջական ծավալով կիրագործվի, եթե փաստաբանական գրասենյակներին զուգահեռ, նման հնարավորություն ընձեռվի նաև որոշակի չափանիշների համապատասխանող **հաշվապահական գրասենյակներին** (գործող որոշումը նման հնավորություն չի նախատեսում):

Հաշվի առնելով, որ բիզնեսի հիմնադրման գործընթացների պարզության, մատչելիության ապահովումը, այդ գործընթացի այլընտրանքային ծախսերի կրճատումը համարվում է ՀՀ կառավարության կողմից ներկայումս վարվող քաղաքականության գերակայություններից մեկը, խնդրում ենք Ձեր հանձնարարականը ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ներկայացված առաջարկությունը քննարկելու և դրա ընդունումը նպատակահարմար համարվելու դեպքում ՀՀ կառավարության քննարկմանը համապատասխան որոշման նախագիծ ներկայացնելու համար:

Կանխավ շնորհակալություն:

Նախագահ՝ **Վահագն Համբարձումյան**

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
NON GOVERNMENTAL ORGANIZATION
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ
00138021
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF ACCOUNTANTS OF SMALL AND MIDDLE ENTREPRENEURS OF ARMENIA
АССОЦИАЦИЯ БУХГАЛТЕРОВ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА АРМЕНИИ